## Արձանագրություն N 2

### <<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/7>> ծածկագրով Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.04.2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ ՝ Հ. Բաղինյան

Լ. Խալաթովա

Շ. Իսախանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Ս. Զաքոյան

### 1. <<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/7>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

---

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

1) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի ապրիլի 12-ին, ժամը 11:15-ին:

2) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի փվյալները | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Տիգրան Բրուտյան>> ԱՁ | armcarwash@mail.ru | 3 000 | - | 3 000 |
| 2 | <<Ֆաստ Ընդ Շայն ԱՄ>> ՍՊԸ | fastandshinearm@gmail.com | 175 000 | - | 175 000 |

3) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 12.04.2019թ. նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4) Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) <<Տիգրան Բրուտյան>> ԱՁ-ի կողմից ներկայացված

- Հավելված N1-ում նշված չէ հրավերով պահանջվող <<ավտոլվացման կետի (կետերի) հասցեն (հասցեները)>>,

- Հավելված N 2.1-ում նշված չէ մասնակցի իրական շահառուի հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

բ) <<Ֆաստ Ընդ Շայն ԱՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված

- Հավելված N1-ում նշված չեն իրավերով պահանջվող մասնակցի իրավաբանական և/կամ գործունեության հասցեն, ինչպես նաև ավտոլվացման կետի (կետերի) հասցեն (հասցեները),
- Հայտում բացակայում է <<Տեխնիկական բնութագիր-գնացուցակը (Աղյուսակ 1)>>:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը 16.04.2019թ. նիստի արդյունքում որոշել է ծանուցել վերը նշված կազմակերպություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները (հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն) և հաջորդ նիստը հրավիրել 18.04.2019թ.:

5) 16.04.2019թ. ծանուցվել է 4)-րդ կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

6) Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում շտկվել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

## 2. <<ՀՀԲԿ-ԳՀԾՁԲ-19/7>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

---

(Տ. Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

| *Զբաղեցրած տեղը* | *Մասնակցի անվանումը* | *Հայտի գնահատականը* |
|---|---|---|
| 1 | <<Տիգրան Բրուտյան>> ԱՁ | բավարար |
| 2 | <<Ֆաստ Ընդ Շայն ԱՄ>> ՍՊԸ | բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

## 3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

---

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

**4. <<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/7>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանը ստանալուց հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թվականի ապրիլի 25-ին ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ------------------------------------------ Տ. Ղուկասյան

Անդամ՝ ------------------------------------------ Հ. Բաղինյան

------------------------------------------ Լ. Խալաթովա

------------------------------------------ Շ. Իսախանյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------ Տ. Վասիլյան